

ՅԱՄԻ ՅՆ ՄԵՐՈՅ ՓՐԿԶԻ
 ՀԱԶԱՐ 2 ԵՕԹԱՆԱՍՈՒՆԻ
 Ի ԿՕՐՆ ԱՊՐԻԼԻ

ՍՏԵՓԱՆՈՍ ՊՕՂՈՍ ՍԻ ԺՈՂՈՎՈՅ ՔԱՐՏՈՒՂԱՐ
 ՎԱՄՆ ՅԻՇԱՏԱԿԻ ԻՒՐՈՅ ԲԱՐԵԿԱՄԻՆ
 ԵՏ ԿԱԶՄԵԼ ԶԱՐԶԱՆՍ

Տապանագիրս ունի նաեւ լատիներէն մաս մը, որուն օրինակը չունիմ: Այստեղ մահուան տարին կը գրուի 1770, մինչ ստոյգն է՝ յամին 1773 Մարտ 24 ի 23 ժամուն յաւուր Ծաղկազարդի, ինչպէս կը տեսնուի Անտոնեան Միաբան շ. Կրիգոր վ. Կերսէսեանի Հռոմէն գրած մէկ նամակէն (Գիւ. Անտ.) ինչպէս նաեւ Սարգսի 9 Յունուար 1773ին առ Մոնս, Պօրճիա գրած նամակէն, զոր վերին յառաջ բերի: Սուրբ ժողովոյ քարտուղարն է Stephanus Borgia.

Գրիգոր Ա. Կեղ. Աշոտեան, Թիֆլիզեցի, երբ եւ ինչպէս Հռոմ եկած եւ հաստատուած է, անծանօթ է ինձ: Այսչափն ստոյգ է՝ որ 1773ին սկիզբը Հռոմ կը գտնուէր, ուր կոնգակ մը գրած է (Գիւ. Անտ.) Փետր. ամսոյ մէջ: Ինքն կաթողիկեայ Հայոց Ս. Մարիամ Եփրատացի եկեղեցւոյ հոգետունն ապրած է իբրեւ կաթողիկեայ, հոն ալ վախճանած է 98 տարեկան՝ 19 Փետր. 1774ին, եւ նոյն եկեղեցւոյն մէջ թաղուած: Իր տապանագիրն է հետեւեալը, որ սխալագիր է եւ վերջընթեր տողին մէջ կրկնութիւններ ունի: